ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 136

ք. Երևան 15.08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00522502; գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Երկաթուղային 4 փ. 2/6) միջև 25.12.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-3/1-5 գնման պայմանագրի և դրա հիման վրա 30.04.2024թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.05.2024թ., ի թիվս այլ ապրանքների պետք է մատակարարեր Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված, ընդհանուր՝ 625 հատ Ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ): Սակայն «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ապրանքները չի մատակարարվել:

Հաշվի առնելով, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ